



Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի
օգնականների դասավանդման հմտությունների զարգացման
ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ *Լոռու մարզ, ք. Սպիտակ, Ա. Մյասնիկյանի անվան № 1
հիմնական դպրոց*

Թեմա՝ *Նախագծային-հետազոտական աշխատանքի յուրօրինակ
գործունեություն չորրորդ դասարանում*

Վերապատրաստող, մենթոր՝ *Հայարվի Խաչատրյան*

Ուսուցիչ՝ *Արմինե Սամվելյան*

Երևան 2023

Բովանդակություն

1. Ներածություն _____ էջ 1
2. Նախագծային աշխատանք _____ էջ 2
3. Նախագծի կազման յոթ հիմնական տարրերը _____ էջ 6
4. Նախագծերի մեթոդի իրականացման փուլերը _____ էջ 8
5. Ինչպե՞ս կազմակերպել նախագծի մեթոդները
տարրական դասարաններում _____ էջ 9
6. Նախագծային-հետազոտական աշխատանքի օրինակ չորրորդ
դասարանում _____ էջ 13
7. Եզրակացություն _____ էջ 16
8. Գրականություն _____ էջ 18
9. Նկարներ _____ էջ 19

ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ

Նախագծերի մեթոդը 21-րդ դարի նորագույն մանկավարժական տեխնոլոգիաներից է, որը թույլ է տալիս անհատականացնելու ուսումնական գործունեությունը, սովորողներին հնարավորություն է տալիս դրսևորելու ինքնուրույնություն՝ իրենց գործունեության պլանավորման հարցում:

Նախագծերի մեթոդն ուսուցման համակարգ է, որի ընթացքում սովորողները գիտելիքներ, կարողություններ, հմտություններ են ձեռք բերում աստիճանաբար բարդացող գործնական նախագծերի պլանավորման և իրագործման ընթացքում:

Նախագծումը(պլանավորում, ուրվագծում) բնորոշ է բոլոր մարդկանց. մարդը մշտապես նախագծում է իր մտքերը, գործողությունները՝ անկախ նպատակից, ոլորտից ու գործունեության տեսակից: «Նախագիծ» ֆրանսերենից թարգմանաբար նշանակում է «դեպի առաջ», ճանապարհ դեպի նպատակ: Համաշխարհային մանկավարժության մեջ այս մեթոդը նոր երևույթ չէ:

Մեթոդն ի հայտ է եկել դեռևս 20-րդ դարի 20-ական թվականներին ԱՄՆ-ում: Այն կոչում են նաև հիմնախնդիրների մեթոդ և կապում են փիլիսոփայության և կրթության բնագավառում հումանիստական ուղղության գաղափարների ի հայտ գալու հետ, որոնք մշակել էին ամերիկացի փիլիսոփա, մանկավարժ Ջոն Դյուին և նրա աշակերտ Վ. Քիլիպատրիկը: Ջոն Դյուին առաջարկում էր ուսուցումը կազմակերպել աշակերտների նպատակային և ակտիվ գործունեության միջոցով և ինչի արդյունքում կրթությունը դարձավ աշակերտակենտրոն: Հետագայում այս մեթոդը լայն տարածում ստացավ եվրոպական երկրներում:

«Այն ամենը, ինչ ես սովորում եմ, գիտեմ, թե ինչի համար է ինձ անհրաժեշտ, որտեղ և ինչպես կարող եմ կիրառել այդ գիտելիքները» . ահա նախագծերի մեթոդի ժամանակակից ըմբռնման հիմնադրույթը:

Աշխատանքի նպատակներն են.

- խթանել ուսման մոտիվացիան
- ավելացնել գիտելիքները քննարկվող հարցի շուրջ
- համախմբել համագործակցային և հաղորդակցական կարողություններն ու հմտությունները

Աշխատանքի խնդիրներն են.

- ուսումնասիրել այն նյութը, որն իրենց հետաքրքրում է
- կիրառել գործնականում ինքնուրույն ձեռք բերած գիտելիքները

- բացահայտել քննադատական, մտածողության, հետազոտական, ստեղծագործական կարողությունները

Նախագծային աշխատանք

Կրթական ժամանակակից համակարգը գործում է մի այնպիսի ժամանակաշրջանում, որ մեր նոր անկախ պետությունը ժողովրդավարության սկզբունքների արմատավորման ճանապարհն է ընտրել: Անընդմեջ սովորելու գաղափարը միշտ զբաղեցրել է մարդու միտքը: Բոլոր դեպքերում ուսումնառության հիմնական օջախը եղել ու մնում է դպրոցը, որին իրենց հույսերով ապավինում են թե՛ ծնողները, թե՛ աշակերտները: Ուստի տեղին ու ժամանակին են կրթության բնագավառում կատարված բարեփոխումները:

Ուսումնական գործընթացի կատարելագործումն այսօր ընթանում է ավելի ակտիվ մեթոդների ընտրության ուղղությամբ: Դրանց կիրառումը միաժամանակ բարձրացնում է յուրաքանչյուր սովորողի անհատական մասնակցությունն ուսուցման գործընթացին և շահագրգռություն առաջացնում ուսման նկատմամբ:

Սովորողի անհատական զարգացումն արդյունավետորեն իրականանում է միայն նրա նպատակաուղղված գործունեության շնորհիվ: Սովորողի մեջ ձևավորել ճանաչողական հետաքրքրություններ, նրան պետք է դուր գա իր ծավալված աշխատանքը, և մինևույն ժամանակ այն լինելու է նրա համար մատչելի ու հասկանալի: Այսինքն ուսումնական գործընթացը պետք է ենթադրի խնդրահարույց իրավիճակ, որի լուծմանը աշակերտները կհանգեն ինքնուրույն՝ իրենց համար մատչելի հետազոտական աշխատանքների շնորհիվ:

Իսկ ի՞նչ է հետազոտությունը. անհայտը որոնելու, նոր գիտելիքներ ձեռք բերելու ճանաչողական գործընթաց, որի հիմքում ընկած են՝

- աշակերտների ճանաչողական կարողությունների և հմտությունների
- տեղեկատվական դաշտում ճիշտ կողմնորոշվելը
- իր գիտելիքներն ինքնուրույն համակարգելն ու դասդասելը
- դատելը, վերլուծելը, համադրելը և այլն:

Չետագոտության ընթացքում իրականացվում են կրթական, զարգացնող և դաստիարակչական խնդիրներ:

Կրթական խնդիրներ

● Ակտիվացնել և արդիականացնել սովորողների գիտելիքներն այս կամ այն թեմայի վերաբերյալ:

● Չամակարգել այդ գիտելիքները:

● Ծանոթացնել դպրոցական ծրագրի սահմաններից դուրս նյութերին:

Չարգացնող խնդիրներ

● Մշակել ուսումնասիրվող թեմայի համատեքստում դատողություններ անելու, վերլուծելու, համեմատելու, ինքնուրույն եզրահանգումներ կատարելու կարողություններ:

● Չրապարակայնորեն ներկայացնել հետագոտության արդյունքներ:

● Անցկացնել ուսումնական հետագոտություններ:

● Չարգացնել կրտսեր դպրոցականների ստեղծագործական – հետազոտական ակտիվությունը:

● Խթանել նրանց հետաքրքրությունը գիտության, շրջակա աշխարհի, միջավայրի նկատմամբ:

Դաստիարակչական խնդիրներ

● Ստանալ այնպիսի «արտադրանք», որն անհրաժեշտ լինի և՛ կատարողին, և՛ այլոց:

● Չետագոտական աշխատանքներում ներգրավել նաև ծնողներին:

● Դասարանում ստեղծել բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ:

Կրտսեր դպրոցականների հետազոտական գործունեությունը կազմակերպելիս խորհուրդ է տրվում կարևորել հետևյալ սկզբունքները՝

● **հասանելիություն** /թեմայի ընտրությունը կատարել ելնելով երեխաների տարիքային առանձնահատկություններից և նախասիրություններից/

● **վստահություն** / երեխային մենակ չթողնել իր խնդրի հետ, ներշնչել նրան հավատ սեփական ուժերի նկատմամբ/

•գարգացնող /դժվարությունների աստիճանական հաղթահարում, որը կտանի դեպի նպատակ և գարգացում/

Ջետազոտական աշխատանքների կազմակերպման արդյունքում ձևավորվում են հետևյալ կարողություններն ու հմտությունները.

ա. մտածական. գաղափարների վարկածների առաջ քաշում, խնդրահարույց իրավիճակների ստեղծում, հարցադրումներ, մեթոդի կամ միջոցի հիմնավորված ընտրություն, գործունեության պլանավորում և իրականացման ճանապարհների որոշում, ինքնավերլուծությունն ու անդրադարձ/ռեֆլեքսիա/

բ. /հավակչական – կազմակերպչական/ Նյութեր պատրաստելու և ներկայացնելու. բանավոր զեկույց /հաղորդագրություն/ աշխատանքի վերաբերյալ, եղանակների կամ միջոցների ընտրություն՝ գործունեության արդյունքերը /արտադրանքը/ զննական ճանապարհով ներկայացնելու համար.

գ. հաղորդակցական՝ լսել և հասկանալ մյուսներին, կարողանալ իրեն դրսևորել, հանդուրժող լինել, կարողանալ համաձայնության գալ, խմբում համագործակցել

դ. որոնողական՝ փնտրել տեղեկույթ գրացուցակներից, համացանցից, գտնել բանալի բառեր, համատեքստից բխող նյութ և այլն

ե. տեղեկատվական՝ տեղեկույթի ձեռք բերում, դասակարգում, գլխավորի առանձնացում, տեղեկույթի փոխանցում, տարբեր ձևերով դրա ներկայացում, դրա ճիշտ պահմանում՝ հետագայում հեշտ գտնելու համար

զ. փորձարարական՝ Աշխատատեղի պատրաստում, անհրաժեշտ գործիքների և նյութերի ընտրում, սեփական փորձի անցկացում, փորձի ընթացքի դիտարկում, պարամետրերի չափում, ստացված արդյունքների գրանցում:

Ջետազոտական աշխատանքները նպատակահարմար է ներկայացնել նախագծային մեթոդի կիրառմամբ: Նախագծային մեթոդը պետք է իրականացնել գրագետ պլանավորված աշխատանքի միջոցով, որը որոշակի քայլերի շարք է , որոնք սկսվում են մարդու առջև դրված իրական խնդրի առաջքաշումով և վերջանում որոշակի արդյունքի ստացումով: Յուրաքանչյուր նախագիծ կախված է ստեղծագործական մտքի հետ և կարող է ծառայել որպես մտածողության զարգացման արդյունավետ գործիք: Դա է պատճառը , որը դարձել է կրթական գործընթացի անխախտ մասը:

Ուսումնական նախագիծը ուսուցչի կողմից հատուկ կազմակերպված և աշակերտների կողմից ինքնուրույն իրականացվող գործողությունների ամբողջությունն է, որն ավարտվում է ստեղծագործական վերջնարդյունքով: Այն իրենից ներկայացնում է հետազոտական, որոնողական, պրոբլեմային մեթոդների համատեղում: Նախագիծը կարող է արդյունավետ գործիք լինել երեխայի իմացականության և ստեղծագործականության զարգացման համար: Նախագիծը կարող է իրականացվել առարկայական, միջառարկայական և վերառարկայական ընդգրկումով: Ուսումնական նախագծային համակարգի հիմնական արժեքն այն է, որ այն աշակերտներին ուղղորդում է, ոչ թե որոշակի թեմայի պարզ ուսումնասիրության, այլ կրթական արդյունք ստեղծելու գործընթացին: (Նախաշավիղ 5, 2015 էջ 4)

Նախագծային մեթոդում տարբերում են հետազոտական, ստեղծագործական, խաղային, տեղեկատվական և գործնական նախագծեր: (Ատեստացիայի փաթեթներ)

• Հետազոտական նախագծերն ունեն ճշգրիտ մտածված կառուցվածք, որը համընկնում է իրական հետազոտության կառուցվածքին. թեմայի արդիականությունը, հետազոտական խնդիրը, առարկան և օբյեկտը, հետազոտության նպատակը, գիտական վարկածը, դրանցից բխող խնդիրները, հետազոտության մեթոդները, արդյունքների քննարկումը, եզրահանգումը և երաշխավորությունները: Սա նախագծի առավել տարածված տեսակն է:

• Ստեղծագործական նախագծերը չունեն սովորողների միասնական գործունեության մանրամասն մշակված կառուցվածք և հետագայում զարգացվում են վերջնական արդյունքի ձևի և ժանրի պահանջներին համապատասխան: Դրանք կարող են լինել պատի թերթ, միջոցառման սցենար, տեսաֆիլմ, դպրոցական ալմանախ, էսսեի կամ հոդվածի պլան, թերթի դիզայն, ռուբրիկներ և այլն:

• Խաղային նախագծերը մեծ նախապատրաստական աշխատանք են պահանջում: Ընդունած որոշումներն իրականացնում են խաղային իրավիճակներում: Սովորողները ստանձնում են որոշակի դերեր: Այսպիսի նախագծերի արդյունքները միայն գործողությունների ավարտից հետո են երևում:

•Տեղեկատվական նախագծերն ուղղված են ինչ-որ մի օբյեկտի, երևույթի մասին տեղեկատվության հավաքմանը, սովորողներին այդ տեղեկատվության ծանոթացմանը, դրա վերլուծությանը և փաստերի ամփոփմանը:

•Գործնական նախագծերը պահանջում են ճշտորեն մտածված կառուցվածք, որը կարող է ներկայացված լինել սցենարի տեսքով, որտեղ որոշված է յուրաքանչյուր մասնակցի գործառույթը և վերջնական արդյունքի ձևավորման մեջ յուրաքանչյուր սովորողի մասնակցությունը: Նպատակահարմար է անցկացնել փուլային քննարկումներ, որոնք հնարավորություն են տալիս կոորդինացնելու սովորողների միասնական գործունեությունը:

Նախագծի կազման 7 հիմնական տարրերը.(Կզևակ բլոգ, 28.11.2023թ. ժամը 20:15)

Չավակնոտ խնդիր կամ հարց (Challenging Problem or Question)

Նախագիտի հիմքում իմաստավից խնդիր է, որը պետք է լուծել, կամ հարց որին պետք է պատասխանել, բարդության համապատասխան մակարդակով:

Ամենակարևորը նախագծի առաջարկած խնդիրն է, հարցը, որը պետք է հետազոտել և լուծում ու պատասխան տալ:

Այդ խնդիրը կարող է լինել իրական, գործնական, կամ վերացական: Որպեսզի նախագիծն իրականացնելու շարժառիթը ավելի մեծ լինի, պետք է առաջարկվող խնդիրների լուծումը հետաքրքրի սովորողներին: Նրանց ոչ թե գիտելիքի և կարողությունների ձեռքբերումը պետք է հետաքրքրի, այլ խնդրի լուծումը:

Շարունակական հարցադրում (Sustained Inquiry)

Սովորողները ներգրավվում են հարցադրումներ տալու, ռեսուրսներ գտնելու և տեղեկատվություն կիրառելու խիստ, ընդլայնված գործընթացում:

Հարցադրումներ անել նշանակում է փնտրել տեղեկություններ, կամ հետազոտել: Սովորողները առերեսվում են բարդ խնդիրների հետ՝ առանց պատրաստի լուծումներ ունենալու, նրանք շատ կրկնողական գործողություններ և հարցադրումներ են անում, և հնարավոր է, որ ավելի արդյունավետ լուծումների հանգեն իրենց ինքնատիպ և քննադատական մտածողությամբ: Նրանք հարցադրումներ են անում, դրանց պատասխանները գտնելու համար աղբյուրներ են փնտրում, արդյունքում, ավելի նպատակային հարցեր ձևակերպում:

Իրական բնույթ (Authenticity)

Նախագիծը ներառում է իրական աշխարհի համատեքստը, առաջադրանքներն ու գործիքները, որակի չափորոշիչները կամ ազդեցությունը, կամ նախագիծը արտացոլում է սովորողների կյանքի անձնական խնդիրները, հետաքրքրությունները և խնդիրները:

Երբ մարդիկ ասում են, որ ինչ-որ բան վավերական է, նկատի ունեն, որ դա իսկական է, կեղծ չէ:

Ուսումնական նախագծեր ձեռնարկելիս պետք է մտածել, թե որքանով են դրանք իրական կյանքին մոտ:

Վավերականությունը մեծացնում է սովորողների սովորելու շարժառիթը, ձգտումները:

Սովորողի ձայնը և ընտրությունը (Student Voice & Choice)

Սովորողները որոշումներ են կայացնում նախագծի վերաբերյալ, ներառյալ այն, թե ինչպես են նրանք աշխատում և ինչ են ստեղծում:

Սովորողները նախագիծն իրենցն են համարում, եթե իրենց խոսքն են ասել դրա ստեղծման գործում: Այդ դեպքում նրանք ավելի ջանասիրաբար են աշխատում: Նրանք նախագծի իրականացման վերահսկողությունը իրենց ձեռքն են վերցնում, որոշում են իրենց դերը աշխատանքի բաժանման ընթացքում՝ որպես աշխատանքային թիմի անդամ:

Անդրադարձ (Reflection)

Սովորողներն ու ուսուցիչները անդրադառնում են ուսմանը, հարցադրումների և նախագծային գործունեության արդյունավետությանը, սովորողների աշխատանքի որակին, դրանց առաջացման խոչընդոտներին և հաղթահարման ռազմավարություններին:

Նախագծի իրականացման ողջ ընթացքում սովորողները և ուսուցիչը պետք է պարբերաբար անդրադարձ կատարեն իրենց անցած ուղուն՝ պատասխանելով այս հարցերին. ի՞նչ են սովորել, ինչպե՞ս են սովորել և ինչու՞ են սովորել: Դրանք նախագծային կատարված աշխատանքի անհրաժեշտ պաշտոնական գնահատումներ են:

Քննադատություն և վերանայում (Critique & Revision)

Սովորողները տալիս են, ստանում և կիրառում են հետադարձ կապ՝ բարելավելու գործընթացը և իրենց արդյունքները:

Նախագծային ուսուցմամբ սովորողները պետք է փորձեն քննության ենթարկել և գնահատել իրենց հասակակիցների կատարած աշխատանքը, իրականացվող նախագծի ընթացքը: Իրականացվող և արդեն իրականացված նախագծերը կարող են գնահատել նաև նախագծի բնագավառի փորձագետները դրսից:

Հանրային արդյունք (Public Product)

Սովորողներն իրենց նախագծի աշխատանքը դարձնում են հանրային՝ բացատրելով, ցուցադրելով և (կամ) այն դասարանի սահմաններից դուրս հանդիսատեսին ներկայացնելով:

Ուսումնական նախագծի վերջնական արդյունքը «ապրանքը» կարող է լինել առարկայական, շոշափելի, կամ էլ՝ մի խնդրի լուծման կամ հանրային

հնչեղություն ունեցող հարցի պատասխանի ներկայացում: Նախագծի վերջնական արդյունքի հանրային ներկայացման հեռանկարը մեծացնում է նախագծի նկատմամբ լրջությունն ու պատասխանատվությունը:

Նախագծերի մեթոդի նպատակը

- Խթանել աշակերտների ինքնագարգացումը
- Կատարել հետազոտական աշխատանք
- Սովորեցնել գործնականում կիրառել գիտելիքները
- Հավաքել, գտել, վերլուծել տեղեկատվությունը
- Ձեռք բերել խմբային աշխատանքի հմտությունները
- Ներկայացնել կատարված աշխատանքի արդյունքները
- Կարողանալ գնահատել իր և իր ընկերների աշխատանքի արդյունքները

Նախագծերի մեթոդի իրականացման փուլերը

- Նախագծի թեմայի ընտրություն
- Չիմնահարցի ձևակերպում
- Աշխատանքային խմբի ձևավորում
- Զետազոտական հարցերի առաջադրում և աշխատանքի բաժանում
- Խմբերի ինքնուրույն աշխատանք և հետազոտություններ
 - Ստացված արդյունքների միջանկյալ քննարկումներ
- Կատարված աշխատանքի արդյունքների ներկայացում
- Անհատների ու ամբողջ խմբի աշխատանքի արդյունքների գնահատում
- Ամփոփում
- Զետագա աշխատանքի ուղիների և նոր նախագծերի նախանշում

Նախագիծը կարող է իրականացվել անհատական կամ խմբակային: Ավելի լավ արդյունք ստացվում է խմբային նախագծում, կոլեկտիվ աշխատանքներում, որոնք ուղղված են կոնկրետ խնդրի լուծման հետ: Անհատական աշխատանքներն արդյունավետ են նրանով, որ ի հայտ են բերում անձի որակական հատկանիշները:

Աշակերտներն անհատապես կամ խմբովի, հանձնարարված թեմայի առնչությամբ, որոշակի ժամանակահատվածում, իրականացնում են ճանաչողական, հետազոտական, կառուցողական գործողություններ, տվյալներ /փաստեր/ հավաքել, դիտարկել, գննումներ կատարել, ապացուել, վերլուծել, կապակցել, հակադրել դրանք, հանդես գալ նախապատրաստական հաղորդումներով, եզրահանգումներով և այլն:

Նախագիծը ենթադրում է կրթական այնպիսի իրավիճակների ստեղծում, որոնք դպրոցականին ստիպում են հակասության մեջ մտնել իր իսկ պատկերացումների հետ, խթանում են նրանց արտահայտելու սեփական ենթադրությունները:

Նախագծերը տարրական դպրոցում թեմատիկ, կիսամյակային, տարեվերջյան ստուգատեսների ծրագրեր են, որոնք կարող են տևել մեկ շաբաթից մինչև մի քանի ամիս: Նախագիծը պարտադիր չէ, որ լինի շատ ծավալուն, կարևոր է, որ թեման լինի աշակերտներին հոգեհարազատ և հետաքրքրի նրանց, հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները:

Նախագիծն ունի որոշակի քայլերով կառուցվածք, որոնց հետևելով մենք ստանում ենք նպատակային և ճիշտ կազմակերպված նախագիծ: Այն ներառում է հետևյալ քայլերը.

1. Նախագծի խնդրի դրվածք
2. Նախագծի թեմա
3. Նախագծի նպատակը
4. Նախագծի խնդիրները
5. Գիտական վարկածի առաջաշում /սա իր մեջ ներառում է հետազոտական մեթոդները, որոնք մենք կիրառում ենք նախագծի մշակման ընթացքում և այն միջոցները, որոնք օգնում են նպատակին հասնելու/
6. Նախագծի արդյունքը:(«Ուսումնառությունն ու դասավանդումը կրտսեր դպրոցում» ԱՅՐԵՔՍ - Երևան2001 էջ 108-109)

Ինչպե՞ս կազմակերպել Նախագծի մեթոդները տարրական դասարաններում

Ցանկացած նախագծի իրականացման անհրաժեշտ նախադրյալ է դրա ճիշտ կազմակերպումը: Այստեղ կարևոր է ուսուցչի և սովորողի համագործակցությունը: Խմբում ուսուցիչն ուղղորդող, շտկող և խորհրդատու է, ինչպես նաև աշխատանքի ոգեշնչողը: Սովորողն այստեղ գաղափարի կրողն է:

Ինչպե՞ս մշակել նախագիծը

Ուսուցիչը վարպետորեն ստեղծում է այնպիսի խնդրահարույց իրավիճակ, որ աշակերտներին թվում է, թե այդ խնդիրը հենց իրենց է մտահոգում և իրենք էլ ցանկանում են դա լուծել: Նախագծի թեմա կարող է դառնալ ցանկացած առարկա, երևույթ, իրավիճակ: Կարելի է առանձնացնել թեմաների երեք խումբ.

1. **Երևակայական`** թեմաներ, որոնք վերաբերում են ոչ իրական իրերին երևույթներին:
2. **Տեսական`** թեմաներ, որոնք նպատակաուղղված են տարբեր աղբյուրների, փաստերի, երևույթների ուսումնասիրմանն ու ամփոփմանը
3. **ճանաչողական`** թեմաներ, որոնք դիտարկվում են սեփական դիտարկումների և փորձերի անցկացում:

Նախագծի դրական կողմերը

Նախագիծը համարվում է հաջողված, եթե.

Թեման ուղղված է կիրառական խնդիրների լուծմանը և թիրախավորում է կոնկրետ շահառուների

Թեման արտացոլում է սովորողների անձնական խնդիրները կամ հետաքր-քրու-թյուն-ները,

Թեմայի իրականացումը պահանջում է մի քանի առարկաներից ստացած գիտելիքների համադրում

- սովորողները ներգրավված են հարցադրումներ կատարելու, ռեսուրսներ գտնելու, տեղեկատվությունը կիրառելու գործընթացներում,
- սովորողները որոշումներ են կայացնում նախագծի վերաբերյալ, այն մասին, թե ինչպես են նրանք աշխատում, ինչ են ստեղծում,
- սովորողները և ուսուցիչները անդրադարձ են կատարում հարցադրումների և գործո-ղությունների արդյունավետությանը, աշխատանքի որակին, խոչընդոտ-ներին և դրանց հաղթահարման ռազմավարություններին,
- սովորողները կիրառում են հետադարձ կապ՝ բարելավելու գործընթացի արդ-յուն-նավետությունը,
- սովորողները իրենց աշխատանքը ներկայացնում են դասարանում և նրա սահ-ման-ներից դուրս:

Նախագծային ուսուցման փուլեր

Նախագծային ուսուցումն ունի շրջափուլային բնույթ: Այդ փուլերն առանձնացվում են հետևյալ հաջորդականությամբ:

- Նախագծի թեմայի ընտրություն
- Հիմնահարցի ձևակերպում
- Աշխատանքային խմբի ձևավորում
- Հետազոտական հարցերի առաջադրում և աշխատանքի բաժանում
- Խմբերի ինքնուրույն աշխատանք, հետազոտություններ
- Ստացված արդյունքների միջանկյալ քննարկումներ
- Կատարված աշխատանքի արդյունքների ներկայացում
- Անհատների և ամբողջ խմբի աշխատանքի արդյունքների գնահատում
- Արտաքին գնահատում, վերլուծություն, ամփոփում
- Հետագա աշխատանքի ուղիների նախանշում

Նախագծի մշակման փուլ: Սա նախագծի հիմնական բաղադրիչների մշակման և մասնակիցների նախապատրաստման գործընթացն է՝ նախագծի խմբի և ղեկավարի որոշում, նպատակների ճշգրտում, հայեցակարգի զարգացում, հիմնական բովանդակության մշակում, օգտագործվող մեթոդների ընտրություն, նախագծի աշխատանքային պլանի ձևակերպում:

Նախագծի իրականացում: Այս փուլն ամփոփում է խմբային աշխատանքի կազմակերպումը, խթանման համակարգի կիրառումը, ընթացիկ պլանավորումն

ու շտկումները, բուն աշխատանքի կատարումը և հսկողության համակարգի ճիշտ գործադրումը:

Եզրափակման փուլ: Ավարտական գործընթացի պլանավորում, արդյունքների գնահատում և ամփոփում, վիճահարույց իրադրությունների հարթում, նախագծի փակում, հետագա աշխատանքի ուղիների և նոր նախագծերի նախանշում:

Նախագծի վերջնական արդյունքի ներկայացում

Տարրական դասարաններում հատուկ ուշադրություն է պահանջում նախագծային գործունեության եզրափակիչ փուլը՝ նախագծի շնորհանդեսը: Նախագծի գաղափարը, նպատակների և խնդիրների շուրջ տարվող աշխատանքը, ինչպես նաև այն ոգևորությունը, որն ուղեկցել է ամբողջ աշխատանքի ընթացքում, արտացոլվում են նախագծի արդյունքում: Այն կարող է լինել գիրք, որտեղ հավաքված լինի ամենակարևոր և անհրաժեշտ տեղեկատվությունը նախագծի թեմայի շուրջ, որոշակի գործողությունների քայլաշարը ներկայացնող ալբոմ, պաստառ և այլն: Ամեն դեպքում, այն ինչ ներկայացվում է վերջնարդյունքում կարևոր է ոչ միայն նախագիծն իրականացնողների, այլև ունկնդիրների համար: Կարևոր հարց է նախագծի արդյունքների գնահատումը, ինչը պետք է կրի խթանող բնույթ: Դպրոցականներին պետք է շնորհել դիպլոմներ, պատվոգրեր, շնորհակալագրեր կամ հիշարժան նվերներ: Հատկապես տարրական դպրոցում պետք է խրախուսվի յուրաքանչյուր աշակերտ, ով մասնակցել է նախագծի իրականացմանը: Անհատական պարգևներից բացի կարելի է պարգևատրել ամբողջ դասարանին՝ նախագծի բարեհաջող ավարտի կապակցությամբ: Դա կարող է լինել էքսկուրսիայի կազմակերպում, այցելություն թանգարան և այլն: Միավորային գնահատման նպատակով իրականացվող նախագծի արդյունքները գնահատվում են ըստ գործնական աշխատանքի համար նախատեսված չափանիշների:

Ամփոփիչ ստուգատեսներում կարող են կիրառվել բազմազան առաջադրանքներ և աշխատանքներ: Աշակերտին ընձեռնում ենք մեծ հնարավորություն ցույց տալու իր ձեռքբերումները, իր գիտելիքները, տաղանդը, կարողություններն ու հմտությունները: Այս ամբողջ պրոցեսը շատ անկաշկանդ

Է և ազատ: Աշակերտն զգում է իր կարևորությունը, իր ստացած աշխատանքի դերն ու նշանակությունը ամբողջ գործընթացում, մեծանում է ձգտումը ուսանելու և ստեղծագործելու:

Ուսուցչի համար կարևոր է.(Կզնակ բլոգ 28.11.2023թ. ժամը 21:15)

Նախագծի փուլերը, վերջնական արդյունքի կանխատեսումը:

- Նախագծի ձևակերպումը, նախապատրաստումը:
- Համագործակցումը այլ մասնագետների հետ:
- Համակարգումը:
- Կանոնավոր նախագծային աշխատանքից շեղումները տարբեր իրավիճակներից կախված:
- Նախագծերի հրնթացս վերաձևակերպումը, մասնակիցների ներգրավումը, ընդլայնում կամ մասնավորեցում:
- Ժամկետների սահմանումը և այլ կազմակերպչական խնդիրները: Մասնակիցների մոտիվացում:
- Նախագծի մասնակիցների ընտրություն:
- Աշխատանքի մասերի բաժանման սկզբունքները («ով ի՞նչ կարող է», «ով ի՞նչ ուզում է», «ով ի՞նչ է ուզում սովորել այդ ընթացքում»):
- Ամեն մասնակցի ձեռքբերման մոտավոր կանխատեսումը:
- Աշխատանքային խմբերի կազմում:
- Աշխատանքի բաժանում:
- Կարճատև նախագծերի ծրագրում:
- Նախագծային աշխատանքի տեսական մասի կատարում (գրադարան, համացանց, խորհրդատվություն)
- Պատրաստած նյութերի վերանայում, քննարկում:
- Աշխատանքների իրականացում՝ ըստ խմբերի:
- Վերջնական արդյունքի ստեղծում:
- Ավարտուն նախագծերի արդյունքների ներկայացում:

Ներկայացնում եմ նախագծային մեթոդով մեկ դասի համառոտ պլանավորման նմուշօրինակ:

Դասերի ընթացքում շատ հարցեր էր առաջանում 7 թվի մասին, որոնք դժվար էր ներկայացնել մեկ դասաժամում, այդ պատճառով որոշեցինք ավելի մանրամասն ծանոթանալ խորհրդավոր 7-ի հետ կապված գիտելիքները տարբեր բնագավառների վերաբերյալ: Յուրաքանչյուր բնագավառի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկություններ հավաքելու համար աշակերտները բաժանվեցին մի քանի աշխատանքային խմբերի: Յուրաքանչյուր աշխատանքային խումբ ստանում է կոնկրետ հետազոտական հանձնարարություններ և մեկ խմբի հետազոտական աշխատանքներն ուսումնասիրում են մյուս խմբի աշակերտները գտնելով իրենց խմբին անհրաժեշտ նյութերը:

Թեմա - Խորհրդավոր 7

Դասարան – IV

Ժամանակ - 3 ամիս

Նպատակը .

1. Կլրացնեն, կխորացնեն գիտելիքները
2. Կզարգացնեն հետազոտական կարողությունները և հետազոտական աշխատանքի մշակույթի ձևավորումը
3. Կզարգացնեն սեփական գիտելիքները ինքնուրույն կառուցելու հմտությունները թե՛ բանավոր, թե՛ գրավոր խոսքում
4. Կկարողանան կողմնորոշվել տեղեկատվական տարածքում
5. Կզարգացնեն քննադատական և ստեղծագործական կարողությունները
6. Կզարգացնեն բազմաբնույթ մտածողությունը
7. Կստեղծեն իրական և շոշոփելի արդյունք

Կահավորում – Բոլոր աշակերտների ձեռքի աշխատանքները. նկարված յոթերը, օրիգամիները, յոթի միջոցով նկարված կենդանիների նկարները, ծիածան ստանալու փորձի պարագաները, ստեղծված խաղերը, տեսանյութ

Ընթացքը –Աշակերտները բաժանվեցին 4 խմբի: Նախագիծը մշակվեց և սկսվեց աշխատանքը:

Հետազոտական աշխատանքների թեման ըստ խմբերի.

1.Պատմական խումբ

- Արարման յոթ օրը
- Աշխարհի յոթ հրաշալիքը
- 2007թ. ՅՈՒՆԵՍԿՕ-յի աշխարհի յոթ հրաշալիքը
- Հայկական խոշոր վանական յոթ համալիրը
- «Յոթ վերք» եկեղեցի
- Սպիտակի երկարաշարժը դեկտեմբերի յոթին
- Պիզայի աշտարակի գանգերի խորհուրդը

2. Բնագիտական խումբ

- Ծիածանի ստացման փորձ
- Յոթը աստղագիտության մեջ
- Թռչնի ձվի կազմությունը
- Յոթ թվի խորհուրդը Էպոսում
- Շախմատի յոթ ոսկե կանոնները
- Ուսումնական խաղերի ստեղծում

3.Լեզվական խումբ

- Գոյականի հոլովները
- Առած, ասացվածք, դարձվածք
- Յոթ արմատով բառեր
- Յոթը հեքիաթում

Ստեղծագործական աշխատանք

- «Ասպետ Յոթը» հեքիաթ
- Հանելուկներ

4.Արվեստի խումբ

- Համբարձման տոն
- Ապրիլի յոթ
- Բեմադրություն
- Երաժշտության յոթ նոտա

- «Սպիտակաձյունիկն ու յոթ թզուկները» հեքիաթ-մուլտֆիլմը
- «Յոթնագույն թերթիկով ծաղիկ» մուլտֆիլմ
- Նկարել յոթ թվի միջոցով
- Օրիգամի՝ յոթ
- «Յոթ քար» ժողովրդական խաղ

Ջետագոտական աշխատանքի ժամանակ խմբերը ծանոթանում էին մյուս խմբերի աշխատանքի հետ ու վեր հանում իրենց համար կարևոր մտքեր:

Բոլոր խմբերն էլ իրենց ցանկությամբ կատարեցին «Արվեստի» խմբի հետաքրքիր աշխատանքները՝ օրիգամին, թվի միջոցով նկարչությունը, դիտեցին մուլտֆիլմերը:

«Յոթ քար» ժողովրդական խաղը խաղացին բոլոր խմբերով:

Վերջնական արդյունք- [«խորհրդավոր 7» գրքի ստեղծում](#) /հեղինակ՝ Չորրորդ դասարանցիներ/

Շնորհանդես- Աշակերտները ամբողջ գրքի նյութը ներկայացրեցին՝ մի խումբը մյուսի միտքը լրացնելով: Բոլոր հյուրերի հետ աշակերտները պատրաստեցին օրիգամի յոթ թիվը:

Աշակերտներին հանձնվեց պատվոգրեր ու շնորհակալագրեր:

Նախագծային շնորհանդեսի արդյունքում աշակերտների մոտ ինքնավստահություն առաջացավ սեփական ուժերի նկատմամբ, նրանց մեջ հայտնաբերվեցին նոր մարդկային որակներ, մտավոր զարգացվածության որակը բարձրացավ, կարողացան ցուցադրել իրենց գիտելիքները և կարողությունները, հետաքրքրություն մտցրին իրենց ընկերների առօրյայում:

Գնահատում- Գնահատումը կատարվեց ըստ խմբերի և յուրաքանչյուրին առանձին՝ իրենց հետ նախապես մշակած գնահատման սանդղակի միջոցով:

Այս աշխատանքի մասին տպվել է Խաչատուր Աբովյանի Մանկավարժական Համալսարանի պաշտոնական թերթում՝

[Պաշտոնաթերթ N4\(1068\) 04.04.2021 էջ 5](#)

Եզրակացություն

Ժամանակակից ուսուցումը պետք է նպաստի ոչ միայն սովորողի կողմից տեղեկատվական բնույթի գիտելիքների վերարտադրման կարողությունների ձևավորմանը /որը հենված է հիմնականում հիշողության վրա/, այլև նրա մեջ տեսական ստեղծագործական մտածողության ձևավորմանն ու զարգացմանը: Միայն վերջինիս առկայության դեպքում է, որ սովորողը /մասնավորապես աշակերտը/ կկարողանա ինքնուրույն բացել բնության և հասարակության մեջ առկա օբյեկտների և երևույթների առանձին կապերն ու հարաբերությունները, կատարել վերլուծություններ, համադրումներ, վերացարկումներ, ընդհանրացումներ, այսինքն՝ պասիվ վերարտադրողից կվերածվի հետազոտողի, ստեղծագործողի:

Այսպիսով, հետազոտական կարողությունների ձևավորումն աշակերտին հնարավորություն կտա անդրադարձորեն գնահատել իր իրականացրած գործունեության որակը, արդյունավետությունը, հարստացնել սեփական փորձը: Անձի մեջ հետազոտական կարողությունների առկայությունը ապացույց է այն բանի, որ նա ունի մտավոր զարգացվածության բարձր մակարդակ: Այդ դեպքում նրա մտածողությունը բնութագրվում է քննադատականությամբ, ինքնուրույնությամբ, տրամաբանությամբ, հետևողականությամբ և այլ դրական որակներով:

Առաջարկվում է նախագծային-հետազոտական աշխատանքը հաճախ կիրառել տարրական դասարաններում, քանի որ նախագծային մեթոդի էությունը սովորողների հետաքրքրությունների խթանումն է որոշակի խնդիրների վերաբերյալ, որոնց լուծումը պահանջում է գիտելիքների որոշակի հանրագումար: Նախագծային մեթոդի հիմքում ընկած է աշակերտի ճանաչողական հմտությունները, ինքնուրույն կողմնորոշվելու

կարողությունները՝ տեղեկատվության որոնման և տեսակավորման գործում, սեփական գիտելիքների ինքնուրույն կառուցելու կարողություններ, քննադատական և տրամաբանական մտածողության զարգացումը: Ուսուցչի իմաստալի պլանավորումից և աշխատանքի նպատակաուղղված ձևերի և միջոցների ընտրությամբ է պայմանավորված սովորողների ուսումնական հետազոտական գործունեության հիմնական հաջողությունը: Ուսուցիչը պետք է ճիշտ ընտրի և համակարգի աշխատանքի անհատական և խմբային ձևերը, համապատասխան ձևակերպի հետազոտություն պահանջող խնդրահարույց հարցերը:

Ժամանակակից ուսումնական գործընթացում ներառված այս մեթոդն իր նոր կյանքն է ապրում և իր ուրույն տեղն է զբաղեցնում մանկավարժական գործընթացում:

Գրականություն

1. Առեստացիայի փաթեթներ
2. Մելանյա Աստվածատրյան, Սիրավարդ Վարդումանյան և ուրիշներ, Ուսումնառությունն ու դասավանդումը կրտսեր դպրոցում, ԱՅՐԵՔՍ-Երևան 2001
3. Նախաշավիղ, Գիտամեթոդական հանդես, 5.2015
4. [ԿՁՆԱԿ](#) հիմնադրամի բլոգ

ՀԱՎԵԼՎԱԾ

Այստեղ կցում եմ նկարների [հղումը](#)

